ՕԳՏՎՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ

Հայաստանի Միգրացիոն Ծառայություն

IOM UN MIGRATION

ԵԱՏՄ անդամ պետությունների
քաղաքացիների համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԵԱՏՄ քաղաքացու գրանցումը և մուտքը հարթակ ---------- 1

1.1. ԵԱՏՄ քաղաքացու գրանցումը Հարթակում ---------- 1

1.2. ԵԱՏՄ քաղաքացու օգտահաշվի գործնական կիրառումը ---------- 3

1 ԵԱՏՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՄՈՒՏՔԸ ՀԱՐԹԱԿ

1.1. ԵԱՏՄ քաղաքացու գրանցումը Հարթակում

ԵԱՏՄ անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք ՀՀ-ում իրականացնում են աշխատանքային գործունեություն, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները, համաձայն ԵԱՏՄ մասին պայմանագրի, ազատված են որևէ թույլտվական փաստաթուղթ ստանալու պահանջից աշխատանքային պայմանագրի գործունեության ամբողջ ժամկետի համար: Միևնույն ժամանակ բնակության օրինականությունը հավաստելու նպատակով այս կատեգորիայի անձինք կարող են գրանցվել Հարթակում և ստանալ համապատասխան տեղեկանք:

ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացու գրանցումը Հարթակում կատարվում է առցանց հետևյալ քայլերի հերթականությամբ.

Քայլ 1 **Մուտք գործել www.workpermit.am կայք:**

Քայլ 2 **Սեղմել բացված պատուհանի վերևի աջ անկյունում առկա «Գրանցում» հղման վրա:**

Քայլ 3 **Բացված պատուհանում ընտրել «ԵԱՏՄ քաղաքացի» ներդիրը՝ սեղմելով «ԵԱՏՄ քաղաքացի» գրառման վրա:**

Քայլ 4 **Լրացնել բացված ձևում առկա դաշտերը ըստ Աղյուսակ 2-ի:**

ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացու գրանցման համար պարտադիր պայման է հանդիսանում ՀԾՀ առկայությունը կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքի համարը:

Աղյուսակ 2: ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացու գրանցման համար լրացվող դաշտերը

հ/հ	Դաշտի անվանումը	Լրացման կարգը
1	Անուն	Ըստ անձնագրի
2	Ազգանուն	Ըստ կցվող անձնագրի
3	Անձնագրի պատճեն	Լուսածրված պատճենը
4	Ծննդյան օր, ամիս, տարի.	Ըստ անձնագրի
5	Քաղաքացիություն	Նշել այն երկիրը, որի քաղաքացիության անձնագիրը կցվում է
6	Էլ. փոստ	Անձնական էլ. փոստի հասցեն, որը ծառայելու է որպես Հարթակի մուտքանուն
7	Սեռ	Ըստ անձնագրի
8	ՀԾՀ	Ըստ տեղեկանքի
9	Հասցե	ՀՀ-ում բնակության հասցեն
10	Աշխատանքային պայմանագրի սկզբի ամսաթիվ	Կցվող աշխատանքային պայմանագրի սկզբի ամսաթիվը
11	Աշխատանքային պայմանագրի ավարտի ամսաթիվ	Կցվող աշխատանքային պայմանագրի ավարտի ամսաթիվը
12	Աշխատանքային պայմանագրի լուսապատճեն	Աշխատանքային պայմանագրի լուսապատճենված կրկնօրինակը
13	Անձնագրի համար	Ըստ կցվող անձնագրի
14	Անձնագրի տրամադրման ամսաթիվ	Կցվող անձնագրի տրամադրման ամսաթիվը
15	Անձնագրի վավերականության ամսաթիվ	Կցվող անձնագրի վավերականության ամսաթիվը
16	Գաղտնաբառ	Հարթակ մուտք գործելու համար գաղտաբառ
17	Կրկնել գաղտնաբառը	Կրկնել 16-րդ կետում մուտքագրված գաղտնաբառը
18	Նշում Տեղեկանք ստանալու ցանկության մասին	Նշում այն մասին, արդյոք անհրաժեշտ է տեղեկանք (այո, ոչ): Այո նշելու դեպքում ՄԾ-ը հետադարձ նամակով կտեղեկացնի Տեղեկանքը ստանալու համար ՄԾ այցելելու օրվա և վայրի մասին:
19	Գունավոր լուսանկար 2,5*3,5 սմ չափի	Գունավոր լուսանկարի լուսապատճեն
20	Նշում ծանուցումները հարթակով ստանալու մասին	Նշում այն մասին, որ գրանցվողը համաձայնություն է տալիս անհրաժեշտ տեղեկատվությունը Հարթակից իր կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին ստանալու վերաբերյալ, և այն համարվում է փոխադարձ համաձայնությամբ պատշաճ ծանուցում:

1.2. ԵԱՏՄ քաղաքացու օգտահաշվի գործնական կիրառումը

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՑ հանրային ծառայությունների համարանիշի ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք չի կարող տպագրվել և տրամադրվել:

1.2.1 Ընտանիքի անդամների ավելացում

ԵԱՏՄ անդամ պետության այն քաղաքացիները, որոնք Հարթակում ունեն ակտիվ օգտահաշիվ, կարող են իրենց հետ ՀՀ ժամանած ընտանիքի անդամներին (ծնողներ, կին, ամուսին, երեխաներ) հաշվառել Հարթակի իրենց օգտահաշվում՝ ներկայացնելով ընտանիքի անդամների համար ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք ստանալու դիմում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացու ընտանիքի անդամին տրամադրվող տեղեկանքը տրվում է Հարթակում գրանցված ՀՀ-ում աշխատանքային գործունեություն իրականացնող ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացու աշխատանքային պայմանագրի ժամկետով, եթե պայմանագիրը կնքված է անժամկետ, տեղեկանքը տրվում է մեկ տարի վավերականության ժամկետով:

Ընտանիքի անդամին Հարթակի օգտահաշվում ավելացնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

Քայլ 1 **Բացել «Հիմնական մենյուն» և ընտրել «Ընտանիքի անդամներ» տողը:**

Քայլ 2 **Բացված էջում լրացնել ընտանիքի անդամի տվյալները:**

Քայլ 3 **Հաստատել մուտքագրումը:**

1.2.2. Տեղեկանքի դիմումի ներկայացում

Եթե ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացին Հարթակում իր գրանցման ընթացքում կամ իր կողմից իր ընտանիքի անդամների տվյալները մուտքագրելու ընթացքում «անհրաժեշտ է տեղեկանք» դաշտում նշել է «ոչ» տարբերակը, ապա ՀՀ-ում բնակության օրինականության տեղեկանք ստանալու մասին դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է.

Քայլ 1 **Մուտք գործել Հարթակ:**

Քայլ 2 **Բացել հիմնական մենյուն և ընտրել «Տեղեկանքի դիմում» տողը:**

Քայլ 3 **Ներկայացնել դիմում:**

Բացված մենյույում ցանկից ընտրել, թե ում համար է ներկայացվում դիմումը՝ ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացու, թե նրա կողմից մուտքագրված ընտանիքի անդամի, և սեղմել «Դիմել» կոճակը: